Կարգապահական գործ թիվ ԿԳ-23054

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎՆԱՆ ԳՐԻՇԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** հանձնաժողովը **(այսուհետ՝ նաև Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ, զեկուցող՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Արաքս Վարդանյանի, Վահագն Քեշիշյանի, Հայկ Սահակյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի կազմով,

Գրավոր ընթացակարգով քննության առնելով փաստաբան **Հովնան Գևորգյանին (այսուհետ՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր թիվ 2406) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 24.10.2023թ. տրամադրված տեղեկանքի՝ **Փաստաբան Հովնան Գևորգյանին** անդամավճարի ընդհանուր պարտքը 24.10.2023թ. դրությամբ կազմում է 155.000 (մեկ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ **2022թ. մարտից 2023թ. օգոստոս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական (սեպտեմբեր) ամսվա անդամավճարը:**

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 15.11.2023թ. թիվ 291-Ա/ԿԳ-23054 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

թիվ ԿԳ-23054-2-Ա
06.03.2024թ.

22.11.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին **(այսուհետ՝ նաև Աշխատակից)**:

3. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 13.12.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, այդ թվում՝ բացատրություն, սակայն Փաստաբանի կողմից այդպիսիք չեն ներկայացվել:

4. <u>Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 15.01.2024թ. Աշխատակիցը Պալատի գլխավոր հաշվապահին առաջարկել է ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, մասնավորապես՝ տրամադրել տեղեկանք Փաստաբանի կողմից անդամավճարի մուծման պարտավորությունները կատարված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

17.01.2024թ. Պալատի գլխավոր հաշվապահը տրամադրել է տեղեկանք:

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 22.01.2024թ. կազմել է եզրակացություն:

Սույն կարգապահական գործը 22.01.2024թ. հանձնվել է Հանձաժողովին:

Հանձնաժողովը 29.01.2024թ. կարգապահական գործն ընդունել է վարույթ, նշանակել է զեկուցող, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման հրապարակման օր, այն է ՝06.03.2024թ.:

<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) **Փաստաբանի** անդամավճարի ընդհանուր պարտքը 24.10.2023թ. դրությամբ կազմել է 155.000 (մեկ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ որից վերջին 18 ամիսների համար՝ **2022թ. մարտից 2023թ. օգոստոս ամիսը ներառյալ, կազմել է 90.000 ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական (սեպտեմբեր) ամսվա անդամավճարը:** *Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 24.10.2023թ. տրամադրված տեղեկանքով:*

2) Փաստաբանն ամբողջությամբ մարել է Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 15.11.2023թ. թիվ 291-Ա/ԿԳ-23054 կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը: (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2024թ. Աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը, կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջն առ այն, որ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներ են՝ ... փաստաբանի՝ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը*:

Օրենքի համաձայն՝

– Փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգեր **(Օրենքի 10-րդ հոդված, 4-րդ մաս, 6-րդ կետ).**

– փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, բացառությամբ սույն օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի. **(Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետ):**

– Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ ի թիվս այլնի, ***Օրենքի պահանջների խախտումը****, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև* ***փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը****, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:* **(Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր):**

<u>Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման մասով</u>

Կանոնագրքի 2.9.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Պալատի խորհրդի 05.02.2014թ. 3/8-L որոշմամբ *փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանված է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ,* **իսկ Պալատի խորհրդի կողմից 13.01.2023թ. թիվ 2/6-L որոշմամբ հաստատված «Փաստաբանի անդամավճարների, հավակնորդների, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգի** (**այսուհետ՝ Կարգ**) **14-րդ կետի համաձայն՝** *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:*

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ *... Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում <u>առաջին հերթին մարվում է</u> փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում:*

Ներկայացված դրույթների համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ փաստաբանի համար, ինչը բխում է նրա կարգավիճակից, ամրագրվում է՝ ի թիվս այլնի, նաև սահմանած չափով և կարգով անդամավճարների մուծման

պարտավորությունը:

Միաժամանակ, Պալատի ներքին իրավական ակտերում ամրագրվել և հստակեցվել են փաստաբանի կողմից անդամավճարների մուծման պարտավորության կատարման ապահովմանն ուղղված մի շարք դրույթներ՝ ինչպես անդամավճարների չափի ու վճարման կարգի ամրագրման, այնպես էլ դրանց վճարման պարտավորության չկատարմանն ուղղված վարքագծի բացառման վերաբերյալ:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է նաև, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքով:

Տվյալ դեպքում, Փաստաբանի կողմից չի կատարվել ամսական կտրվածքով անդամավճարները վճարելու իր պարտականությունը (Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ):

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտում:

<u>Կանոնագրքի 9.1.3 ենթակետի խախտման մասով</u>

Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:*

Վերոնշված կանոնի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ Հանձնաժողովը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և Հանձնաժողովի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու օրվա դրությամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված ենթակետում մատնանշված18 ամիսը հաշվարկվում է 2022 թվականի մարտից մինչև 2023 թվականի օգոստոս ամիսը ներառյալ, երբ կուտակվել է Փաստաբանի անդամավճարի պարտքը:

Սույն դեպքում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել այն, որ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի 06.03.2024թ. տեղեկանքի

համաձայն Փաստաբանն ամբողջությամբ վճարել է սույն որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը:

6. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների*

պալատի կարգապահական ***հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ*** *փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:* ***Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն****:*

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Օրենքով Պալատին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Պալատը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում՝ Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում նշանակելով համապատասխան կարգապահական տույժ:

Հարկ է նշել, որ Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում ամրագրվել են անդամավճար չվճարելու համար փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժի ընտրության համար որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում կոնկրետ կարգապահական գործով Հանձնաժողովը կարող է կիրառել ավելի մեղմ կամ ավելի խիստ կարգապահական տույժ՝ «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» տույժի տեսակ:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարի վճարման պարտականության չկատարման վարքագիծը, որպես կարգապահական խախտում, գնահատվում է այնքան խիստ, որ դրա համար ուղղակիորեն նախատեսված է «արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժի տեսակի նշանակման հնարավորությունը, ինչպես նաև այն, որ Օրենքով և Կանոնագրքով հստակ սահմանված են այն պարտադիր պայմանները, որոնց համապատասխանության դեպքում նման վարքագիծ դրսևորած փաստաբանի նկատմամբ կարող են նշանակվել «նկատողություն» կամ «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակները, Հանձնաժողովը գտնում է, որ փաստացի նույն վարքագիծը դրսևորած՝ անդամավճարը չվճարած, սակայն հետագայում՝ մինչև տվյալ գործով Հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ, կուտակված պարտքը մարած փաստաբանի նկատմամբ ամենա մեղմ պատասխանատվության միջոց կիրառելը կդիտարկվի անհամաչափ:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ Պատասխանողն ըստ էության գոյացրել և ձևավորել է 18 ամսվա պարտք (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի՝

կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը), ինչպես նաև չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:

Ի հավելումն նշվածի՝ Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Պատասխանողի կողմից անդամավճարի չվճարման արդյունքում չի ապահովվում Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով[1] ամրագրված Պալատի գույքային երաշխիքը, ինչն իր հերթին խոչընդոտում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Պալատի խնդիրների իրականացմանը:

Հանձնաժողովը անդամավճարներ չվճարելու հարցում միասնական մոտեցում ցուցաբերելու նկատառումից ելնելով, գտնում է, որ այն փաստաբանը, որը չի վճարել մինչև 20 ամսվա անդամավճարը, **առաջին անգամ** Կանոնագրքի 9.1.3 ենթակետի հնարավորությունից օգտվելու դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը), ենթակա է կարգապահական պատասխանատվության նկատողության ձևով, իսկ 20 ամսից ավելի անդամավճարի պարտք ունեցող փաստաբանի դեպքում (եթե ամբողջությամբ վճարել է անդամավճարի պարտքը)՝ կիրառվում է խիստ նկատողությունը:

Ամփոփելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պատասխանողն ամբողջությամբ վճարել է Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 291-Ա/ԿԳ-23054 որոշման կայացման պահի դրությամբ առկա իր անդամավճարի պարտքը, Հանձնաժողովը Պատասխանողի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն» տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի և Կանոնագրքի 9.1.3 ենթակետի պահանջներով՝

Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հովնան Գրիշայի Գևորգյանին (արտոնագիր թիվ 2406) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել Փաստաբանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների*

---

[1] **Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների անդամավճարներից, փաստաբանների հավակնորդների մուտքի վճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից: Փաստաբանների պալատի անդամավճարները մուծվում են փաստաբանների պալատի խորհրդի սահմանած չափով և կարգով՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:*

պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23054-2-Ա
06 մարտի 2024թ.
ք.Երևան